ցեալ զգեստ և փչեայ պսակ համարիմ, և ոչ փառս, որոյ վասն կրկին աղաչեմ, ճանաչել զօգուտն Ս. Աթոռոյն և այնպէս անօրինել»։

Յետ այնորիկ հինգ եպիսկոպոսունք գնացին առ ծերունազարդ Մարտիրոս վարդապետն, որ անկեալ դնէր 'ի մահիճս. այր հանճարեղ եւ խոհեմ, տեղեակ ամենայն գործոց Աթոռոյն և առաձկական դպրութեան. զի տեսեալ իսկ էր նորա զվախճան և զնորոգումն Պատրիարքաց ոմանց և յայտ արարին նմա զընտրութիւն Պետրոսի իբրեւ հըմուտ և տեղեակ բովանդակ գործոց Աթոռոյն, սնեալ և վարժեալ 'ի նոսա 'ի մանկութենէ իւրմէ, զի մի' մատնեսցի ասեն՝ այս իշխանութիւն 'ի ձեռս անխոհեմաց ոմանց, և տապալեսցի բարեկարգութիւնք տանն, եւ մեք լիցուք առիթ բազմապատիկ վնասուց և անդարմանելի ծախուց, որպէս լեալ է երբեմն՝ զնոյն և ամենայն միաբանք կրկնէին։ Եւ նորա հաճեալ 'ի բարի խորհուրդս նոցա, գրեաց և ինքն գիր առ Պատրիարքն, և զկնի այսմ գրեցին և ինքեանք գիր հանրական՝ յոր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան, և թախանձանօք խնդրէին 'ի Պատրիարքէն և 'ի գլխաւորաց ազգին հաճիլ ընդ ընտրութիւնս իւրեանց, և զՓակակալ Պետրոս Եպիսկոպոսն ճանաչել Պատրիարք Ս. Աթոռոյն Երուսաղէմի, և փութալ հանել զհրովարտակն յարքունուստ յանուն նորա. զայսոսիկ գրեանս առաքեցին 'ի ձեռն Մելքոն վարդապետի։ Ի ժամանել թղթոցն 'ի Բիւզանդիոն՝ Պատրիարքն և իշխանաւորք ազգին ետուն հաւանութիւն ընդ ընտրութիւն Պետրոսի, և առին հրովարտակ յԱրքայէ՝ գրեալ ՌՃՈՒ և առաքեցին զայն յԵրուսաղէմ, և Պետրոս Եպիսկոպոս նստաւ յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի (1794. 'ի 14 Փետրվարի) յաւուր տօնի Քառասնօրեայ դալստեան Տեառն 'ի Տաճարն։ Արարացիք և այլազգիք Երուսաղէմի այսպիսի դիպաց և առթի սպասէին. զի սովորութիւն էր 'ի նստիլ նոր Պատրիարքի ընդունիլ պարգեւս, որոյ վասն առհասարակ դիմեցին 'ի վերայ նորա՝ և նա բաժանեաց ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան, մինչեւ հասանիլ զումար դրամացն 20,000 դահեկան, բայց կարի դժուարին եղեւ հաճել զկամս քաղաքապետին, դատաւորին և այլոց։